

«ԳԱԳԻԿ-ԷՆԹՈՒՄՅԱՆ ԲԺՇԿԱՐԱՆԸ»
ԵՎ ՆՐԱ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ*

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քաղաքատնայաց հարստության ծաղկման շրջանում Անի մայրաքաղաքում ստեղծված արժեքավոր բժշկական գործերի շարքում աչքի է ընկնում «հաղթող Գագիկ թագավորի» օրոք գրված մի ինքնատիպ դեղագիտական, որը հետագայում Կիլիկյան Հայաստանում խմբագրվելով կոչվեց «Գագիկ-Հենթումյան բրժշկարան»։ Այդ հոշակավոր «ավագ հեքիմարանը» կամ, ըստ նշանավոր բժշկապատմաբան Վ. Քորգոմյանի՝ «հետագա գարեբու հայ բժշկարաններու մայրը»¹, XIX դարի երկրորդ կեսից իր վրա էր հրավիրել հայագետների լուրջ ուշադրությունը։ Ուսումնասիրողները² հիմնականում հանգել են այն եզրակացություն, որ այս Գագիկ թագավորը եղել է Անիի Բագրատունյաց տոհմի փայլուն ներկայացուցիչ Գագիկ I-ը (990—1020), մինչդեռ Գ. Հովսեփյանը³, հիմնվելով ուշ շրջանի հիշատակարանի վրա, հակված էր ընդունել, որ Գագիկ Կարսեցին է։

Առ այսօր հայագիտությանը հայտնի են եղել «Գագիկ-Հենթումյան ըրը-կարանի» երկու գրչագրեր՝ Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վանքի Մատենադարանի № 370 թղթյա ձեռագիրը և Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի № 1281 մագաղաթյա մատյանը, որոնք տեղ-տեղ բավականաչափ հեռանալով իրարից՝ կարող են դիտվել իբրև խմբագրական տարբերակներ։ Ինչ վերաբերում է բուն «Գագիկի գեղարդիտարանին», ապա այն Անիի անկումից հետո բազմաթիվ հայերեն ձեռագրերի հետ բերվել է Կիլիկյան Հայաստան և այստեղ խմբագրվել Օշինյան-Հենթումյան տոհմի ներկայացուցիչների նախաձեռնությամբ և մասնակցությամբ՝ կազմելով «Գագիկ-Հենթումյան բժշկարանի» առաջին մասը։ Բժշկարանի երկու գրչագրերում էլ այս առումով հիշատակվում է «Օշինի որդի Հենթումը», սակայն տարբեր տիտղոսներով։ Ալսուպես, օրինակ, Երուսաղեմի տարբերակում նա կոչվում է «Հենթում սեւաստիոս, որդի Օշինի», մինչդեռ Վենետիկի տարբերակում նրա մասին ասված է՝ «ղթագաւորազն այր, դբրիստոնապաշտ և խոհեմ և քաջարանց պարոն զբարեհամբան Հենթում, տէր Կոռիկոսի» կամ «մեծ սեւաստիոս»։ Եթե սկզբնական շրջանում այս տարբերությունը վրիպել էր հայագետների ուշադրությունից և Հենթումը համարվում էր Օշին կամբրոնացու որդին, որը հաջորդել էր իր հորը մարաջախտության պաշտոնում 1294 թ.⁴, ապա հետագայում, ելնելով վերո-

* Հոգվածը զեկուցվել է Մատոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանում (1980 թ.) և Հայաստանի բժշկապատմաբանների ընկերության 25-ամյակին նվիրված հոբելյանական կոնֆերանսում (1984 թ.):

1 Վ. Քորգոմյան. Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղազարու վանքին. «Գագիկ-Հենթումյան բժշկարան».—«Բաղմավեպ», 1923, № 2, էջ 40:

2 Ա. Սուքրյան. Պատմություն հայ բժշկության.—«Բաղմավեպ», 1881, էջ 33—34; Ղ. Հովանյան. Հետազոտությունը նախնեաց ուսմանը հիմնված վրայ. հ. Ա, Վիեննա, 1897, էջ 55, 136: Վ. Քորգոմյան. նշվ. աշխ.—«Բաղմավեպ», 1923, № 1, էջ 8:

3 Գ. Հովսեփյան. Հիշատակարանք. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 672:

4 Մեսրոպ Մագիստրոս (Փարսաղան Տեր-Մովսիսյան). Մխիթար Հեբրացու և Ամիրգուլիայի Սերաստացվոր երկու նշանավոր ձեռագրերը.—«Արարատ», 1909, 7—8, էջ 590: Վ. Քորգոմյան. Հայ բժշկական ձեռագիրք. Բժշկարան Երուսաղեմի վանքին.—«Հանդես ամսօրյա», 1924, 3—4, էջ 111:

հիշյալ տվյալներից, հետազոտողներն եկան այն եզրակացության, որ երկու տարբերակներում «Հեթումը» նույն անձնավորությունը չէ⁵: Սևաստիոս տիտղոսը մատնանշում է ներսես կամբրոնացու ավագ եղբորը՝ Հեթումին, որն իբրև սևաստիոս իշխեսց կամբրոնին մինչև 1201 թ., երբ Լևոն II-ի կողմից կալանավորվեց անհնազանդության պատճառով և ապա կրոնավորություն ընդունեց Հեղի անվամբ⁶: Նա հիշատակվում է ոչ միայն իբրև բժշկարանի ստացող, այլ նաև գրիչ⁷: «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» երկու տարբերակներում էլ այդ մասին պահպանվել է հետևյալ ուշագրավ վկայությունը. «Այլ նշանք պատրաստութեան մատուցի, զոր արար ծեր բժիշկն պաղտատցի ինձ՝ Հեթմոյ սևաստիոսի, որ է ազտակար միջացալի, կողընջոտի և այլ այդպիսի ցաւս»⁸: Ներսես կամբրոնացու ավագ եղբայր Հեթումը, «այր զգօն և մեծիմաստ և գրագետ յոյժ», ինչպես նրան բնութագրում է Ղ. Ալիշանը, ամենայն հավանակալութեամբ եղել է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» առաջին խմբագիրը: Այդ գործը նա կարող էր կատարած լինել ոչ ուշ, քան 1201 թ., քանի որ դեռ կոչվում էր սևաստիոս, բայց և ոչ շուտ, քան 1184 թ., որովհետև այդ թվականին էր Մխիթար Հերացին ստեղծել իր «Ջերմանց մխիթարութիւն» գիրքը, որը համառոտ ձևով մտավ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» մեջ իբրև նրա երկրորդ մաս: Խմբագիրը մեկ այլ կարևոր ծառայություն էլ մատուցեց հայ բժշկագիտությանը՝ ներմուծելով մի շատ արժեքավոր բժշկարան, որի հեղինակն առ այսօր անհայտ է: Այսպիսով, «Գագիկ-Հեթումյան բժշկարանը» «Գագիկի դեղագիտարանի» համեմատութեամբ ունի ավելի մեծ ծավալ, կազմված է երեք մասից՝ ա) Գագիկ թագավորի օրոք գրած դեղագիտարանից, բ) Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» համառոտ խմբագրությունից, գ) կիլիկյան դպրոցի անանուն բժշկարանից:

Ինչ վերաբերում է երկրորդ Հեթումի անձնավորությանը, ապա հայագետների կարծիքով, «Կոռիկոսի տէր» և «մեծ սևաստիոս» տիտղոսները պատկանում են Հեթում պատմիչին (XIII—XIV դդ.)⁹: Այդ շրջանում կամբրոնի իշխանների պայքարը Ռուբինյան թագավորների դեմ արդեն ավարտվել էր հաղթանակով և «թագաւորազն» Հեթում պատմիչը, Հեթում II-ի ազգակիցը, բարձր գնահատելով իր նախնիներից մեկի ձեռքով արտագրած ու գուցե նաև խմբագրած «Գագիկ-Հեթումյան բժշկարանը», որը, հավանաբար, պահվում էր Հեթումյանների մատենադարանում, 1294 թ. ծերունի Վարդ Մրտիչեցուն կարգադրեց այն կրկին արտագրել մագաղաթի վրա: Վերջինս թե՛ իր սեփական նախածեռնութեամբ, թե՛ Հեթում պատմիչի ցուցմունքով որոշ դեպքերում կրճատել էր բնագիրը կամ ազատ շարագրել այն, ստեղծելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» Վենետիկի տարբերակը (ձեռ. № 1281), որը, բարեբախտաբար, լավ է պահպանվել Նրուսադեմի հնագույն տարբերակի համեմատութեամբ (ձեռ. № 370):

«Գագիկ-Հեթումյան բժշկարանի» մասնագիտական ուսումնասիրությունը սկսվեց մեր դարի 20-ական թթ., երբ Վ. Թորգոմյանը «Բագմավեպի» և «Հանդես ամսօրյայի» էջերում հանգես եկավ մի շարք հոդվածներով, որտեղ կանգ առավ բժշկարանի ընդհանուր նկարագրության վրա, արժարծելով նրա հեղինակի հարցը: Վաստակաշատ գիտնականն այն միտքն էր հայտնել¹⁰, որ բժշկարանի հեղինակն է եղել X—XI դդ. հուլակավոր փիլիսոփա, բանաստեղծ ու

5 Գ. Հո վ ս ե փ յ ա ն. Հիշատակարանք. հ. Ա, էջ 670:

6 Ղ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ, 1885, էջ 81—83:

7 Ն. Գո դ ր յ ա ն. Մայր-ցուցակ ձեռագրաց սրբոյ Հակոբյանց. հ. Բ, 1967, երուսադեմ, էջ 288:

8 Ձեռ. № 370, էջ 19ա, ձեռ. № 1281, էջ 18բ:

9 Ղ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ, 1885, էջ 337: Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Գ, Իրևան, 1946, էջ 73:

10 Վ. Թորգոմյան. Հայ բժշկական ձեռագիրք ու Ղուգարու վանքին.—«Բագմավեպ», 1923, № 3, էջ 70:

բժիշկ Գրիգոր Մազիստրոսը, Իբն Սինայի ժամանակակիցը, որի բեղմնավոր գործունեությունը կապված էր Անիի, Հաղպատի ու Տարոնի միջնագարյան հայ ակադեմիաների հետ: Սակայն Մազիստրոսի «Թղթերի» վերամբարձ, հունա-լատինականներով հագեցած ոճը համեմատելով «Գաղիկ-Հեթումյանի բժշկարանի» գրեթե պարզունակ միջին հայերենի հետ, դժվար է համաձայնել վերոհիշյալ վարկածի հետ: Հարցի ճիշտ լուծմանը խանգարում է այն հանգամանքը, որ հեղինակը, միջնագարյան հայ բժիշկներին բնորոշ համեստությամբ, համարյա չի խոսում իր մասին, իրեն համարելով հելլեն իմաստունների խոնարհ աշակերտ: Միայն մի քանի անգամ է բժշկարանում հնչում գիտուն բր-ժըշկի ձայնը, որը խորապես ծանոթ էր հայ ժողովրդի բարբերին և սովորու-թյուններին: Այսպես, օրինակ, «Վասն ամենայն ցեղ մսերոց և ձկանց» գըլ-խում նկարագրելով կարմրախայտ ձուկը, նա գրում է. «Եւ թեպէտ յանուանէն չեն գրել իմաստասէրքն, այլ յիմոյ տխմարութենէս յավելում զայս բանս»¹¹: Կամ էլ մեկ այլ տեղ անում է հետևյալ դիտողությունը. «Թոնրի եփած հացն լաւ է, քան փոնեփածն»¹²:

«Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» մասնագիտական վերլուծության համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում քննական բնագրի բացակայությունը: Ժամա-նակին Վ. Թորոզյանը ցանկություն էր հայտնել, որ «հայ մեկենաս մը ծներ հանկարծ և Կոթթեմպերկի անմահ ձեռքերուն հանձներ այս թանկարժեք բժըշ-կարանը»¹³: Սակայն այդ ցանկությունը մնաց անկատար: Ձեռքի տակ ունենա-լով Երուսաղեմի և Վենետիկի գրչագրերի միկրոթապավենները և նրանցից պատրաստած քսերոպատճենները՝ մենք կատարել ենք բնագրագիտական և բժշկագիտական հետազոտություն, այլ հարցերի շարքում պարզելով նաև այն հարցը, թե Մաշտոցի անվան Մատենադարանում արդյոք պահպանվե՞լ է «ավագ հեթումարանի» որևէ խմբագրական տարբերակ կամ թեկուզ դրա հետ-բերը:

Նախքան մեր կատարած պրպտումների արդյունքներին անդրադառնալը համառոտակի բնութագրենք «Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» երկու տարբե-րակները, որոնք արդեն մտել են գիտական շրջանառության մեջ: Երուսաղեմի հնագույն գրչագիրը մեզ է հասել թերի վիճակում. առաջին մասի 35 գիծից պահպանվել է միայն 19-ը, երրորդ մասի 91 զլխից՝ 42-ը, իսկ 7-ը թերի են, միայն երկրորդ մասը պահպանվել է գրեթե ամբողջությամբ (30 զլուխ), բոլոր-գիր գրությունները: Հայագետներից ոմանք (Ն. Պողարյան, Գ. Հովսեփյան) ուշադ-րություն են դարձրել, որ Երուսաղեմի տարբերակը հին մասից բացի (բոլոր-գիր) պարունակում է նաև ուշ շրջանի բաժին նոտրգիր գրությամբ, որը նույ-նիսկ կարելի է դիտել իբրև բժշկարանի շորորդ մաս: Պետք է նշել, որ Երու-սաղեմի տարբերակի ուշ շրջանի կազմողը «Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» թերի մասերը, որոնք կազմում են հին բնագրի մոտավորապես 50 տոկոսը, փո-խարինել է տարբեր բժշկարաններից քաղած նոր գլուխներով («Վասն կաթան առնելոյ», «Վասն ապիկիս արկանելոյ», «Վասն քարերուն դորութեան» և այլն), տեղ-տեղ էլ օգտվել է մեզ չհասած «ավագ հեթումարանի» այլ խմբագրական տարբերակից (սրա մասին դեռ կխոսվի առաջիկայում): Ինչ վերաբերում է Վենետիկի տարբերակին, ապա այն, բարբախտաբար, պահպանվել է գրեթե անթերի վիճակում և կարող է հիմք ծառայել «Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» քննական բնագիրը հրատարակելու համար, իսկ Երուսաղեմի տարբերակի շնորհիվ հնարավոր կլինի լրացնել ու ճշտել կասկածելի տեղերը և բացթողում-ները, որոնք առկա են առաջինում: Այսպես, օրինակ, «Գաղիկ-Հեթումյան բր-ժըշկարանի» դեղաբանական բառարանը, «Վասն մեկնութեան դեղոց» խորա-գրով, Վենետիկի տարբերակում շատ ավելի համառոտ է, քան Երուսաղեմի

11 Ձեռ. N. 1281, էջ 56ա:
12 Նույն տեղում. էջ 48ա:
13 Վ. Թորոզյան. Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղաշարու վանքին.—«Բաղմավեպ», 1925, N. 2, էջ 43:

գրչագրում¹⁴ և ավարտվում է «ս» տառով. այսպիսով նրանում բացակայում են «տ»-ով «փ»-ով, «ք»-ով և «ֆ»-ով 22 դեղանուններ (տրունէճ, տափնի, տիկնակիս, տապաշիր, փանիր, փեգենա, փաղանփուշտ, փրասիոն, փարփար, փաղանիա, փառսիայւշան, քրքում, քուզպարա, քաշմ, քրդոս, քշութ, քահրուպայ, քաղբան, քթիրա, քափուր, քաշմարու, ֆուսիլ), որոնք անշուշտ պիտի վերականգնվեն քննական բնագրում:

Ըստումնասիրելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» և մասնավորապես նրա Ա մասի կառուցվածքը, տեսնում ենք, որ այն արտացոլում է միջնադարյան դեղագիտարանների դարգացման վաղ շրջանը, երբ պարզ դեղերի ուսմունքը, որը արաբների մոտ կոչվում էր «Մուֆրադաթ», դեռ չէր անջատված բարդ դեղերի գրքից կամ «Ախրապատինից»: Հայ դեղագիտության մեջ այդպիսի անջատում տեղի ունեցավ ավելի ուշ շրջանում, Ամիրդովլաթ Ամասիացու գործերում (XV դար): Սակայն նույնիսկ նրա առաջին «Ախրապատինում» (1459 թ.) դեռ զգացվում է «Գագիկի դեղագիտարանի» սզդեցությունը. բարդ դեղերի կողքին նկարագրված են պարզերը, որոնք կազմում են «Վասն դեղերուն զօրութեան» խորագրով մի առանձին գլուխ, ինչպես և Անիի վերոհիշյալ դեղագիտարանում:

Գալով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» ծագման և սկզբնաղբյուրների հարցին, պետք է նշել, որ նրա Ա մասում ակնհայտ է անտիկ բժշկության և մասնավորապես հույն բուսաբան և բժիշկ Դիոսկորիդեսի «Materia medica»¹⁵ գրքի ազդեցությունը: Առաջին հերթին այս վերաբերում է «Գագիկի դեղագիտարանի» հետևյալ գլուխներին՝ «Վասն դեղերոյ զօրութեանց, զոր մէկ-մէկ առուին» (ԺԳ), «Վասն ամենայն ցեղ ձիթերոյ» (ԺԴ), «Վասն ամենայն ցեղ բուսոց և տնկոց» (ԺԵ), «Վասն ամենայն ցեղ հնդանաց» (Ի), «Վասն ամենայն ցեղ մրգերոյ» (ԻԱ), «Վասն ամենայն ցեղ բանջարոց» (ԻԲ), «Վասն ամենայն ցեղ համեմնոյ» (ԻԳ), «Վասն ամենայն ցեղ սնուշահոտաց» (ԻԴ): «Վասն բուսոց և տնկոց և օգտակարութեանցն նոցին» գլխում հեղինակն ուղղակի նշում է իր աղբյուրը. «Պատմէ զմեծ իմաստասէրն Դիոսկորիդոս վասն բուսոց և տնկոց զպիտանին և զօգտակարսն ցուցանելով»¹⁶: Հարց է ծագում, արդյոք «Գագիկի դեղագիտարանի» հեղինակը ձեռքի տակ ունեցել է «Materia medica»-ի հայերեն թարգմանությունը, թե օգտվել է արաբերենից: Անիական շրջանում արբեն, ամենայն հավանականությամբ, պիտի գոյություն ունենար հռչակավոր հույն հեղինակ Դիոսկորիդեսի գործի հայերեն թարգմանությունը, այլապես «ագաբ հեթումարանի» հայ հեղինակը կհանդիպեր լուրջ տերմինաբանական դժվարությունների, մինչդեռ նա հունարեն դեղանունների կողքին նշում է բնիկ հայերեն բառեր: Անտիկ բժշկության ազդեցությունից բացի «Գագիկի դեղագիտարանում» և մասնավորապես բարդ դեղանյութերին նվիրված մի շարք գլուխներում՝ «Վասն ամենայն ցեղ մտպուխներոյ» (Ձ), «Վասն ամենայն ցեղ հապերոյ և թրջած սապոին» (է), «Վասն ամենայն ցեղ մանդր լուծման դեղերոյ» (Լ), «Վասն ամենայն ցեղ խուրսերոյ» (Ս), «Վասն ամենայն ցեղ մաճուննոյ» (Շ) և այլն սկսում է զգացվել արաբական բժշկության ոգին: Ժամանակին այս հանգամանքը շատ է դբաղկեցրել հայագետների ու բժշկապատմաբանների ուշադրությունը, նույնիսկ ոմանք հանգել են ծայրահեղ կարծիքի՝ «Գագիկ-Հեթումյան բժշկարանը» համարելով զուտ թարգմանական գործ, Իբն Սինայի «Կանոնի» կամ Առ Ռագիի «Նավասի» ընդօրինակություն: Հայ բժշկության պատմության տվյալները վկայում են այն մասին, որ իրենց «թարգմանող» են համարել մեր անվանի բժշկապետներ Մխիթար Հեբացին և Ամիրդովլաթ Ամասիացին, որոնք օգտվել են օտար աղբյուրներից, սակայն պահպանել են ստեղծագործական ինքնուրույնությունը: Այդ տեսանկյունից ուսումնասիրելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանը», տեսնում ենք, որ այն չի կարող դիտվել որպես

¹⁴ Ձև. № 1281, էջ 72ա—73բ; Ձեռ. № 370, էջ 110—114ա:

¹⁵ Pedani Dioscoridis Anazarbei. De materia medica. V. 1, 2. Lipsiae, 1829—1830.

¹⁶ Ձև. № 1281, էջ 44ա:

խարգմանական և մանավանդ՝ արաբ բժշկի գործ: Օտար հեղինակներից այստեղ վկայակոչված են մեծ մասամբ անտիկ բժիշկները՝ Հիպոկրատեսը, Արիստոտելը, Ասկղեպիադեսը, Դիոսկորիդեսը, Դեմոկրատեսը, Գաղիանոսը և Սրիբագեսը, իրենց անունների ճշգրիտ հունարեն արտասանությամբ և ոչ թե աղավաղված արաբացված ձևերով, ինչպես այդ տեղի էր ունեցել հետագա դարերի բժշկարաններում, նույնիսկ Ամիրգովլաթ Ամասիացու գործերում: «Գաղիկ-Հեթումյան բժշկարանում» մի քանի անգամ հիշատակվում է XI դարի ասորի բժիշկ Յիսէն (Ճեսուն), որը դեղատոմսեր է գրել Վահրամ Պահլավունու որդու՝ Դրիգորի համար: Արաբ բժիշկներից «Գաղիկի դեղագիտարանում» միայն մեկ անգամ հիշատակվում է առ Ռազին և ոչ մի անգամ՝ Իբն Սինան: Այսպիսով անիական շրջանի դեղագիտարանի հայ հեղինակը թեպետ ծանոթ էր արաբական բժշկության նվաճումներին, սակայն իր ամբողջ էությունով կապված էր անտիկ մշակույթի հետ: Իր բնագիտական հայացքները նա արտահայտել է «Վասն բնութեանց մարդկան, թէ որովս բաժանին յեղանակս տարույն» և «Վասն թէ որպէս գոյանայ մանուկն յորովայնի մօր» գլուխներում: Այստեղ նա շարագրել է չորս տարրերի անտիկ ուսմունքը և ընդարձակ մեջբերումներ կատարել Ասկղեպիադեսին վերագրվող գործերից: Մաշտոցի անվան Մատենադարանի № 6869 ժողովածուի մեջ (1369 թ.) պահպանվել է Ասկղեպիադեսի երկերից մի պատառիկ՝ «Ասկղիպիադա վասն չորից բնութեանց մարդոյ և տարույ և ամսոյ» խորագրով: Համեմատելով վերոհիշյալ պատառիկը «Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» Ա մասի «Վասն բնութեան մարդկան» գլխի հետ՝ սկսած «Ասէ մեծն յիմաստասէրս բժշկական վարդապետն Ասկղիպէ, եթէ բնութիւնք մարդկան բաժանին ի Դ» խոսքերից, պարզել ենք, որ այն № 6869 ձեռագրի նշված պատառիկի համառոտ խմբագրությունն է: Բերենք օրինակ.

Աստիպիդա վասն չորից բնութեանց մարդոյ
և տարոյ և ամսոյ
Ձեռ. № 6869, էջ 151բ

Վասն բնութեանց մարդկան
րէ որպէս բաժանին յեղանակս տարոյն
Ձեռ. № 1281, էջ 61բ

«Բնութիւն մարդոյ բաժանեալ է ի չորս առաջս. և զմի մի ի նոցանէ պարտ է գիտել, եթէ զինչ զարութիւն ունի: Խարտեաշ մաղցոյ զարութիւն չորին է և ջերմին և զբերանն դաւն առնէ, և չորութիւն լինի ի բերանոյն և ծարաւ առնէ և թալաղուցանէ, զաշսն խաւարեցուցանէ»:

«Ասէ մեծն յիմաստասէրս բժշկական վարդապետն Ասկղիպէ, եթէ բնութիւնք մարդկան բաժանին ի Դ առաջս. և զմի մի ի նոցանէ պարտ է գիտել, թէ զինչ զարութիւն ունին: Խարտեշ մաղձն զարութիւն ունի ջերմին և չորահին, զբերան լեղեցնէ ու չորցնէ, ծարաւացնէ և թալցնէ և զաշսն խաւրեցնէ»:

Նույն ժողովածուի մեջ գետեղված է հոռմեացի բժիշկ Դեմոկրատեսին վերագրվող հարց ու պատասխանի ձևով կառուցված մի պատառիկ՝ «Դիմոկրատէս հարցաւ, թէ սնունդ մանկան և կերակուր ուստի է» խորագրով, որտեղ այրծարծվում են պտղի զարգացման ու սնուցման հարցերը: Պարզվել է, որ այն նույնպես ծագում է «Գաղիկ-Հեթումյան բժշկարանի» Ա մասի «Թէ որպէս գոյանայ մանուկ յարգանգի մար» գլխից: Բերենք մի օրինակ ևս.

Դիմոկրատէս հարցաւ, րէ սնունդ մանկան և կերակուրն ուստի է և որպէս նայ յորովայնին
Ձեռ. № 6869, էջ 147ա-բ

Եհարց Դիմոկրատէս, րէ սնունդ մանկան և կերակուր ուստի լինի
Ձեռ. № 1281, էջ 61ա

«Դիմոկրատէս ասաց, թէ կին յորժամ յղի լինի, կանացիք և արգելուն և արին կանացն լամէն ար պարզի, յամէն անդամոցն և երթայ ընդ պորտ մանկանն: Զի յերկրորդ ժամուն Երթայ կերակուրն Գ կերատ և հաւախուսին

«Պատասխանի ետ Հիպոկրատէս և ասէ, եթէ կին յորժամ յղանա, կանացիքն արգելուն և արին կանացեցն ամէն ատուր պարզի յամէն անդամոցն և երթա ընդ պորտ մանկան յորովայն մանկանն: Ի յերրորդ ժամն Գ խերատ և

* Սրա վրա տարիներ առաջ մեր ուշադրությունն էր հրավիրել անվանի հայագետ Լ. Խաչիկյանը:

երթայ Բ կերատ և այգույն պարարի. և սնանի մանուկն: Զկերակուրն առնու մանուկն, նշանն այս է, զի խաղայ մանուկն յորովայնին. և որպէս ասացի վասն մանկանն կերակրոյն, և վասն կանանց նոյնպէս:

ի հաւախօսին՝ Բ կերատ. և այնու սնանի մանուկն: Իսկ յորժամ առնու զկերակուրն մանուկն, նշան այս է, որ խաղա ի յորովայնի մարն. և որպէս ասացի վասն կերակրոց մանկանն, և վասն կանացեցն նոյնպէս և այս է»:

Ասկզկեպիաղիսի և Դեմոկրատեսի գործերը (ամբողջութեամբ թե հատվածաբար), հավանաբար, թարգմանվել են հայերեն ավելի վաղ շրջանում, հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից և հետագայում մտել «ավագ հեքիմարանը»: Ուրեմն պատահական չէ, որ որոշ բժշկապատմաբաններ այս բժշկարանի հեղինակության հարցը կապել են Հայաստանում հունաբան ուղղության վերջին նշանավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Մագիստրոսի անվան հետ:

Ինչպես պատմական ուսումնասիրությունների ընթացքում նկատել ենք մեկ այլ ուշագրավ փաստ. «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» պրոգնոստիկայի և դիագնոստիկայի հարցերին նվիրված Ա մասի շորրորդ գլուխը՝ «Վասն թէ քանի դիմօք մարթէ բժշկին զհիւանդն ստածել» խորագրով, հանդիպում է Մխիթար Հեթումյանի «Ջերմանց մխիթարութեան» վերջում, մինչդեռ սրա համառոտ խմբագրությունում, որը, ինչպես ասացինք, կազմում է «ավագ հեքիմարանի» Բ մասը, այն բացակայում է: Այդ տեղաշարժը, մեր կարծիքով, պետք է կատարած լիներ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» խմբագիրը՝ խուսափելով ավելորդ կրկնությունից, սակայն բացառված չէ և այլ հնարավորություն՝ որ ինքը «մեծն Մխիթարը», ինչպես նրանից հետո շատ հայ բժիշկներ, օգտվել է Անիի դպրոցի այս գլուխգործոցից:

Վասն երէ Բանի դիմօք մարթէ զնիւանդն ստածել և բժշկել

Մխիթարայ բժշկապետի Հերացոյ «Ջերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832, էջ 143

Վասն քէ Բանի դիմօք մարթէ բժշկիև զնիւանդն ստածել և բժշկել

Զև. № 1281, էջ 14ա

«Պարտ է բժշկին, որ զհիւանդն ծառայէ, որ ուզէման ի տասն իրք ալրնէ. առաջին ղէման, որ յուզէ զպատճառն ցաւոյն և զհիւանդութեան. և երկրորդն՝ զպատահմունքն, որ զկնի հիւանդութեանցն լինի. երրորդն՝ զխառնածք մարմնուն. չորրորդ՝ զկերպ մարմնոյն. հինգերորդ՝ զաւուրբն զհիւանդին. վեցերորդն՝ օգոյն զորպիսութիւն և զերկիրն. եօթներորդ՝ զեղանակն ի շորից եղանակաց տարւոյն. ութերորդ՝ զաշխարհն իմանալ, ուստի հիւանդն է. իններորդ՝ զսովորութիւն հիւանդին. տասներորդ՝ զուժն և զօրութիւն հիւանդին»:

«Պարտ էր բժշկին, որ հիւանդի ծառայէ զղէմս ի ժ իրք այնել. առաջին ղէմքն, որ ուզէ զպատճառն ցաւուն և զհիւանդութիւնն. երկրորդն՝ զպատահմունքն, որ զկնի հիւանդութեանցն լինին. երրորդն՝ զխառնածքն մարմնոյ հիւանդին. չորրորդ՝ զկերպն մարմնոյ հիւանդին. և՝ զաւուրբ հիւանդին, Զ՝ զօգոյն որպիսութիւն և զերկրին. է՝ զեղանակն ի Գ եղանակաց տարւոյն. Ը՝ զաշխարհն իմանալ, ուստի հիւանդն է. Թ՝ զսովորութիւնն հիւանդին. Ժ՝ զուժն և զօրութիւն հիւանդին»:

«Գագիկ-Հեթումյան բժշկարանի» Բ և Գ մասերը կիլիկյան բժշկական դպրոցի արգասիք են ի տարբերություն Ա մասի կամ «Գագիկի դեղագիտարանի», որը կազմում է «ավագ հեքիմարանի» հնագույն շերտը և պատկանում է Անիի դպրոցին: Բժշկարանի Բ և Գ մասերում ավելի հաճախ են հանդիպում արբաբ բժիշկների անունները, արաբական և պարսկական տերմինները, փաստեր, որոնք խոսում են միջնադարյան հայ բժշկության մեջ XII—XIII դդ. կատարված տեղաշարժի մասին հելլենիզմից դեպի Արևելքի գիտությունը: Եթե «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» Բ մասի հեղինակությունը ոչ մի կասկած չի հարուցել մասնագետների մոտ, որովհետև բնագրագիտական համեմատություններով հնարավոր եղավ որոշել նրա նույնությունը Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» հետ, ապա Գ մասի հեղինակի հարցը առ այսօր

լուծված է: Ըստ Վ. Թորգոմյանի¹⁷ ենթադրության, սրա հեղինակը նույնպես եղել է Մխիթար Հերացին, որի կորած աշխատությունների թվին էր պատկանում հուշակավոր «Ախտաբանութիւնը»: Այս վարկածը ինչքան էլ հրապուրիչ լինի «մեծն Մխիթարի» գիտական ժառանգության որոնողներին, դեռ կարոտ է լուրջ գիտական փաստարկներին:

«Գագիկ-Հեթումյան բժշկարանի» Գ մասը նվիրված է ախտաբանության, մահճաբուժության և գեղագիտության հարցերին: Այստեղ տրված է ներքին հիվանդությունների նկարագրությունը վերից վար սկզբունքով, ինչպես նաև ուռուցքների, այրվածքների և վերքերի կլինիկական պատկերը և բուժումը: Իհարկե XII—XIII դդ. հայ հեղինակը շէր կարող տալ հիվանդությունների մի այնպիսի կատարյալ դասակարգում, ինչպես այդ արեց XV դարում Ամիրդովլաթ Ամասիացին իր «Օգուտ բժշկութեան» գրքում, սակայն որոշ հիվանդություններ նրա մոտ նկարագրված են մեծ վարպետությամբ, օրինակ՝ ընկնավորությունը, միգրենը, սրտի հիվանդությունները, կատաղությունը և այլն:

«Գագիկ-Հեթումյան բժշկարանը» իր ամբողջությամբ և առանձին մասերով խոր ազդեցություն է թողել հետագա դարերի հայ բժիշկների սերունդների վրա՝ սկսած Մխիթար Հերացուց մինչև Ամիրդովլաթ Ամասիացին և նրա հետնորդները: Ամիրդովլաթ Ամասիացու առաջին «Ախրապատիսից» մոտավորապես քսան տարի առաջ ստեղծված «Հովհաննես Հեթիմի բժշկարանը» (1438) սերտորեն առնչվում է «ավագ հեթիմարանի» հետ, ինչպես ժամանակին նկատել էր Ղ. Հովնանյանը¹⁸: Ձեռքի տակ ունենալով Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 310 ձեռագրի միկրոթապավենը, որը պարունակում է «Հովհաննես հեթիմի բժշկարանը», մենք այն համեմատել ենք «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» հետ: Իսկապես, այս երկու բժշկարանների ընդհանրություններն այնքան ակնառու են, որ կարելի է նույնիսկ «Հովհաննես հեթիմի բժշկարանը» գիտել ոչ իբրև ինքնուրույն գործ, այլ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» ազատ խմբագրություն, որին կցած են նաև այլ բժշկական նյութեր: Այսպես, օրինակ, «ավագ հեթիմարանի» Ա մասից նրա մեջ մտել էր 10 գլուխ, Բ մասից՝ 7 գլուխ, Գ մասից՝ 22 գլուխ, իսկ ընդհանուր առմամբ՝ 39 գլուխ: Ազատ վարվելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» նյութի հետ, կազմողը մի մասից մյուսն է տեղափոխել մի շարք գլուխներ, ավելացրել նորերը, օրինակ՝ «Յաղագս սֆուֆուտյ», «Յաղագս սպեղոնեաց», «Յաղագս ցանկեաց», «Տառապան մարդու գիրք», «Յաղագս զանազան մորհամնոյ փոխանի լազին գրոց»: Դեռևս Ղ. Հովնանյանը և հետագայում Հ. Կարստը¹⁹ նշել են, որ «Հովհաննես հեթիմի բժշկարանի» կազմողն օգտվել է եվրոպական գրականությունից: Եվ իսկապես, «լազին գրոց» առկայության մասին է վկայում բժշկարանի սկզբում, ուղղակի ցանկից հետո տեղադրված մի բառարան՝ «Անուանք դեղերոյ հայերէն և յարապակերէն և ի լազին բառով» խորագրով, մինչդեռ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» «Մեկնութիւն դեղոց» բառարանն այստեղ բացակայում է: Արտահայտելով իր ժամանակի պահանջը և միջնադարյան հայ բժշկության մեջ երկրորդ տերմինաբանական տեղաշարժը (այս անգամ արաբական-պարսկականից դեպի լատինական-եվրոպական), Հովհաննես հեթիմը հարթատացրել էր իր բժշկարանը լատիններեն բառաշարտով: Ի դեպ, հիշենք, որ հետագայում այս բառարանի օգնությանն էր դիմել Ամիրդովլաթ Ամասիացին՝ «Անգիտաց անպէտ» գրքում դեղանունները տալով լատիններեն²⁰: Միջնադար-

¹⁷ Վ. Թորգոմյան. Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղազարոս վանքին.— «Բազմավեպ», 1923, № 2, էջ 40:

¹⁸ Ղ. Հովնանյան. Նշվ. աշխ., հ. Ա, էջ 143—162:


¹⁹ Նույն տեղում, էջ 140—142: J. Karst. Das trilingue Medizinalglossar aus BMS. 310 der Wiener Mechitharisten Bibliothek.—Zeitschrift für armenische Philologie, 2. H. 2, Marburg, 1903, S. 113—114.

²⁰ Амйрдовлат Амаснаци. Неужное для неучей. Комментированный перевод с древнеармянского. Подготовила С. А. Варданян. М. (в печати).

յան հայ բժշկական գրականության մեջ, անկասկած, պիտի գոյություն ունենային «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» խմբագրական այլ տարբերակներ եւ: Տարիներ առաջ Ղ. Հովնանյանը եւ Վ. Թորգոմյանը գրել են, որ իրենց հասած տեղեկությունների համաձայն, էջմիածնի մատենադարանում պահվում է 1276 թ. մի բժշկարան, որը, իրենց համոզմամբ, «ավագ հեքիմարանի» հնագույն տարբերակն է²¹: Ուսումնասիրելով Հ. Կարենյանի²² «էջմիածնի մայր



նկ. 1



նկ. 2

ցուցակը», որի վրա էր հիմնված այդ տեղեկությունը, պարզել ենք, որ այստեղ տեղի է ունեցել սովորական շփոթություն. «Ցուցակում» նկարագրված է Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» 1279 թ. գրչագիրը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 416), սակայն իբրև գրության ժամանակ սխալմամբ նշված է 1276 թ. և չկան տվյալներ հեղինակի ու բժշկարանի վերնագրի մասին. այստեղից էլ բխում է հիշյալ թյուրիմացությունը:

Համոզված լինելով, որ Մաշտոցի անվան Մատենադարանի բժշկական ձեռագրերի հավաքածուում պիտի պահպանված լինի «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» տարբերակներից որևէ մեկը՝ մենք այդ տեսանկյունից քննության ենք առել մի շարք բժշկական ձեռագրեր: Երկար պրպտումներից հետո հաջողվեց հայտնաբերել «ավագ հեքիմարանի» հետքերը Մատենադարանի № 8382 ժուղովածուի մեջ: Վերջինս բաղկացած է հին մասից, որի գրության ժամանակը համարվում է XIV դարի սկիզբը, և ուշ շրջանի հավելվածից (XVII—XVIII դդ.)²³: Առ այսօր բժշկարանը չի ենթարկվել լուրջ բնագրագի-

21 Ղ. Հովնանյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 120: Վ. Թորգոմյան. Հայ բժշկական ձեռագիրը ս. Ղազարու վանքին. — «Բաղմավեղ», 1923, № 3, էջ 70:

22 Հ. Կարենյան. Մալր ցուցակ ձեռագիր մատենից գրագրանի սրբոյ աթոռոյն. էջմիածնի. Թիֆլիզ, 1865, էջ 26:

23 Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Բ, Երևան, 1970, էջ 732:

տական և բժշկագիտական վերլուծության, թևակետ տարբեր հեղինակներ իրենց գրքերում նրանից հարուստ նյութեր են քաղել²⁴։ Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ № 8382 ժողովածուի XIV դարի բաժինը ոչ թե միասնական գործ է, այլ բաղկացած է 4 առանձին անանուն բժշկարաններից (բույրգիր գրություններ), որոնք ձևավորված են չորս ավետարանների ոճով, ըստ որում ամեն մի բժշկարան սկզբում ունեցել է հեղինակի դիմանկարը, կիսախորաններ և հարուստ զարդանկարներ։ Ժամանակի ընթացքում ձեռագրի բաղմամբիվ թերթեր և նույնիսկ ամբողջ տետրեր ընկել են, չորս մանրանկարներից մնացել են միայն երկուսը, սակայն նույնիսկ այժմյան վիճակում նա աչքի է ընկնում Մաշտոցի անվան Մատենադարանի բժշկական ձեռագրերի հավաքածուի մեջ իր ճոխություններ։ Ավելորդ չինք համարում ձեռագրի արդի վիճակի մասին տալ մանրամասն տեղեկություններ։ Ձեռագիրը սկզբում ունի երկու մագաղախյա պահպանակ թերթեր ավետարանից։ Ժողովածուի հին մասը կազմված է եղել 27 տետրից, յուրաքանչյուրը՝ 12 թերթ, որոնցից այսօր բացակայում է ութ տետր (Ա, Բ, Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԵ), չորս տետր (ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԻԶ) ունեն 11-ական թերթ, իսկ երեք տետր (ԺԳ, ԻԷ, Գ)՝ համապատասխանաբար՝ 6, 4 և 1 թերթ։ Այսպիսով, ժողովածուի հին բաժնի 324 թերթից պահպանվել է միայն 199-ը, այսինքն մոտավորապես 60 տոկոսը։ Առաջին բժշկարանը սկզբից թերթի է. 35 թերթ ընկած են, բացակայում են ցանկը, մանրանկարը և բնագրի առաջին 17 գլուխը, իսկ 18-րդը՝ թերթի է։ Ընդամենը բժշկարանն ունեցել է 99 գլուխ։ 70բ էջում գտնվում է երկրորդ բժշկարանի ցանկը՝ լուսանցազարդերով և զարդանկարներով, 71բ-ում՝ գրչի հիշատակարանը. «Ով եղբարք, յիշեցեք զանարժան կրանաւորս և սուտանուն արեղայս Մահակս ի տէր և աստուած զձեզ յիշէ յիւր սուրբ արքայութիւն. ամէն»։ 72բ-ում գտնվում է միջնադարյան հայ բժշկի դիմանկար (նկ. 1)։ Կապույտ ֆոնի վրա ծալապատիկ նստած է պատկանելի տեսքով, 40-ը անց մի մարդ, սև մորուքով, հագին սպիտակ շապիկ և կանաչավուն զգեստ, գլխին՝ քորոցներով ամրացրած սպիտակ շալմայատիպ գլխարկ, ձեռքերին՝ սպիտակ ձեռնոցներ, բռնած ունի քրջան, նշտար, շուրջը կան այլ բժշկական գործիքներ (մկրատ, դանակ, անոթներ)։ 73ա-ից սկսվում է երկրորդ բժշկարանի բնագիրը (կիսախորանով (նկ. 2), որն ունեցել է 48 գլուխ, այժմ վերջին երկուսը պակասում են, իսկ 46-րդը թերթի է։ Բժշկարանի ընկած 109-րդ թերթը հետագայում փոխարինվել է նոր թղթով, որի վրա գրած են զանազան դեղատոմսեր։ 110ա-բ էջերում գտնվում է երրորդ բժշկարանի ցանկը, որը սկզբից և վերջից թերթի է, բացակայում է նաև մանրանկարը։ Երրորդ բժշկարանը պարունակում է 58 գլուխ։ 142բ—145ա էջերում գտնվում է չորրորդ բժշկարանի ցանկը՝ լուսանցազարդերով և զարդանկարներով, իսկ 145բ-ում միջնադարյան հայ բժշկի երկրորդ պահպանված դիմանկարն է (նկ. 3)։ Բժիշկը, համեմատաբար երիտասարդ մարդ, պատկերված է կարմիր ֆոնի վրա, ծալապատիկ թախտին նստած, հիվանդ երեխային զննելու պահին. մի ձեռքով բռնել է հիվանդի ձեռտից, մյուսով պահում է գլուխը։ Երեխայի մի աչքը փակ է։ Բժիշկը հագին ունի սպիտակ, խալաթանման լայն զգեստ, կարճ, մինչև արմունկները հասնող թևերով, որի տակից երևում է սպիտակ վերնաշապիկը, գլխին՝ սպիտակ շալմայատիպ գլխարկ, ձեռքերին՝ սպիտակ ձեռնոցներ։ Շրջապատված է բժշկական գործիքներով (նշտար, մկրատ, զանազան անոթներ, փոքր կուժ)։ Երկու մանրանկարների բժիշկների զգեստը և մանավանդ ձեռնոցների առկայությունը վկայում է, որ միջնադարյան հայ բժիշկներին խորթ չէր հավաքարակախության գաղափարը։ 146ա-ից սկսվում է չորրորդ բժշկարանի բնագիրը՝ կիսախորանով ու գեղեցիկ գլխատառերով (նկ. 4) և ավարտվում է 203բ էջում։ Ունի 115 գլուխ, որոնցից այժմ բացակայում են երեքը (49—51-րդը) և

24 Ա. Կ Օ յ ա ն. Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIV դդ., Երևան, 1968, էջ 223, 253, 263, 274; Г. Г. Арутюнян. Гинекология и акушерство в Армении в древние и средние века. Ереван, 1974, с. 158, 165, 188, 191, 217.

թերի են երկուսը (18-րդ, 115-րդ): Հին բնագրի ընկած երեք թերթ (163, 187, 201) փոխարինված են ուշ շրջանի թղթով՝ վրան գրած զանազան դեղատոմսեր: և այլ բժշկական նյութեր: 203ա-բ էջերում գտնվում է գրչի զլխավար հիշատակարանը, որը սկզբից թերթի է: Վերջինս առ այսօր չի հրատարակվել, ուստի տալիս ենք առանց կրճատումների:

«[Ընդ հովանեաւ Ս.] Սարգսին ի վայելումն տէր Գրիգոր իրիցուն և



Նկ. 3



Նկ. 4

որդոցն Յովանիսին և Հալրապետին ձեռամբ բազմամեղ և անարուեստ և աեխմաստ փրձուն գրչի սուտանուն Սահակ կրանաւորի: Ով քահանայո՛ր / մանկունք Սիոնի, յորժամ կարդայք զգեղ պիտանի, յիշման առեք զմեզ արժանի, ձեր ամենիդ մեղքն քաւի, մեզ և ձեզ տէրն ողորմի ի յաւուրն ապագաի: Այլ արդ աղաչեմ զձեզ խոշորութեան և սղալանացս գրոցն անմեղադիր լերուք, ով եղբարք, զի կար մեր այս է: Յիշեցեք ի մաքրափայլ աղաթս շէր յխաւարեալ և անպիտանացեալ ոգի Սահակ աբեղաիս, այլև ի զվարպետս իս՝ Ստեփաննոս: կրանաւորն հանգուցեալն ի Ջրիստոս և զԱնանիա կրանաւորն, որ աշխատեցաւ ի կոկելն թըղտին և մարմնաւոր ծնաւոս իմ: Եւ ով որ բոլորով սրտիւ ողորմիս ասէ, նայ տէր աստուած տացէ զիւր սուրբ արքայութիւն: Ինչ որ մեզ ասեն, աստուած զայն տացէ իւրեանց: Այլ և յիշեցեք ի յաղաթս շէր Գրիգոր Լրեցն և զիւր կողակիցն Վարդենին, որք ըստացան զբըժըշկարան գիրքս իւրեանց հալալ արդեանց, յիշատակ իւրեանց և ծնաւոցն իւրոց ի վայելումն և իւրեանց զաւակացն Թաղևոսին և Յովհաննիսին և Հալրապետին: Ով որ բոլոր սրտիւ ողորմիս տայ ըստացողացն, նայ աստուած արձանի արասցէ զիւր սուրբ արքայութեան: 204-րդ թերթում գտնվում են ուշ շրջանի գրչափորձեր: 205ա էջից մինչև 268բ-ն գտնվում է ուշ շրջանի հավելված նոտագիր գրությամբ, որը պարունակում է մանկաբուժության և դեղագիտության հարցերին նվիրված գլուխներ, ինչպես նաև տոմարական աղյուսակներ և գուշակութչուններ: Ձեռագիրը ընդհանուր առմամբ լավ է պահպանվել, միայն տեղ-տեղ որոշ թերթեր խոնավութչունից խոնացել են:

Քեպեստ ձեռագրի սկզբնական մասի բացակայության, ինչպես և գլխավոր հիշատակարանի թերի լինելու պատճառով շունենք ճշգրիտ տեղեկություններ հեղինակի կամ հեղինակների անունների, գրելու ժամանակի և վայրի մասին, սակայն մանրանկարների և զարդանկարների ոճը հուշում է, որ № 8382 ժողովածուն նկարագարովել է Սյունիքի կենտրոններից մեկում. պատահական չէ, որ նրա ստացողներից մեկը եղել է Սիմեոն Տաթևացին: Միջնադարյան հայ բժշկական ձեռագրերից այսպես շքեղ զարդարված է եղել միայն «Գազիկ-Հեթումյան բժշկարանի» նրուսաղեմի տարբերակը, որն ունի երկու մանրանկարներ, որտեղ պատկերված են բժիշկները՝ հիվանդի մահճակալի մոտ խորհրդատվության պահին և երակառույցի տեսարանը: Սրանք մանրամասնորեն նկարագրված են Մեսրոպ Մազիստրոսի և Վ. Թորգոմյանի հոդվածներում²⁵, ուստի հարկ չենք համարում անդրսդառնալ այս հարցին: Այսպիսով, № 8382 ժողովածուի մանրանկարները, որոնք պահպանվել են լավ վիճակում, հարստացնում են մեր պատկերացումները միջնադարյան հայ բժշկի արտաքին տեսքի, նրա բժշկական գործիքների և կատարած բժշկական միջամտությունների մասին, որոնք գալիս են լրացնելու «Գազիկ-Հեթումյան բժշկարանի», ցավոք, շատ վատ պահպանված մանրանկարների ուղագրավ տեսարանները: Սակայն միայն սրանով չի սպառվում այս երկու բժշկարանների միջև եղած ընդհանրությունը: № 8382 ժողովածուի հին մասը համեմատելով «Գազիկ-Հեթումյան բժշկարանի» հետ՝ մենք սրանց միջև նկատել ենք զգալի նմանություն: Առաջին հերթին այդ վերաբերում է ժողովածուի առաջին և չորրորդ բժշկարաններին: Առաջինն իր կառուցվածքով մոտ է «Գազիկ-Հեթումյան բժշկարանին», սակայն կազմողը, ինչպես այդ արել է նաև Հովհաննես հեքիմը, կատարել է գլուխների տեղափոխություն՝ դեղագիտական մասը, պրոգնոստիկայով, տանելով բժշկարանի վերջը: Այս մասի 9 գլուխ համապատասխանում են «ամազ հեքիմարանի» համանուն գլուխներին՝ «Վասն ամենայն երակաց (ԽԹ)», «Վասն զձեռնվան (Մ)», «Վասն ամենայն ցեղ ձիթերոյ» (ՁԵ), «Վասն ամենայն ցեղ հնդաց» (ՁԸ), «Վասն ամենայն ցեղ խաւարտի» (Ղ), «Վասն ամենայն ցեղ համեմնոյ օգտութեանց» (ՂԱ), «Վասն ամենայն ցեղ մսերոյ» (ՂԲ), «Վասն ամենայն ցեղ ձկանց» (ՂԳ): Այսպիսով, պարզ դեղերի և սննդանյութերի ուսմունքն առաջին բժշկարանում ծագում է «Գազիկ-Հեթումյանից», մինչդեռ բարդ դեղանյութերի նկարագրությունը որևէ առնչություն չունի վերջինիս հետ: Անկասկած, № 8382 ժողովածուի առաջին բժշկարանի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է «Գազիկ-Հեթումյան բժշկարանի» տարբերակը, որից ազատորեն օգտվել է: Իբրև ապացույց բերենք նույն մասին մի հատված առաջին բժշկարանի «Վասն ամենայն ցեղ մրգաց» գլխից, այն համեմատելով «ամազ հեքիմարանի» «Վասն օգտակարութեանց մրգաց» գլխի համապատասխան մասի հետ.

Վասն ամենայն ցեղ մրգաց
Ձեռ. № 8382, էջ 49ա-բ

Վասն օգտակարութեանց մրգաց
Ձեռ. № 1281, էջ 49ա

«Յառաջ քան զասէն զնուն յիշենք, զի աստուած քան զամէն միւրզ զինքս լաւագոյն է ստեղծել: Եւ ինքս Գ ազգ է. քաղցր, թուփու և մուգ, Իսկ թրթու նուան ջուրն ազտէ ստամոքի, որ խիստ ջերմութիւն ունենայ ի սաֆրակէ: Եւ նուան ի դեղի մաւտ է, քան ի կերակուր: Եւ թրթու նուան զգոզն յորդեցնէ: Եւ երբ զիր ջուրն ի յաջող քաշես, զդեղութիւն տանի յաչիցն: Եւ նուան հատն կապական է... Եւ երբ զնուան ծառին

«Յառաջ զնուն յիշենք, զի օգտակար է և պիտանի: Բայց նուան Գ ցեղ է. քաղցր և մուգ և թփու: Իսկ երբ զթրթու նուան ջուրն խմել տաս, օգտէ, եփ ստամոքն խիստ տաքութեան ի սաֆրակէ: Զի Բագրատ ասէ, թէ կին մի եկ առ իմ, և սաֆրա իջանէր ի ստամոքն և ձիճն վազէր. տվի իր թփու նուան ջուր և զարո փոխինդ. նոնջուրն զսաֆրայն տարաւ և զարկիփոխինդն զստամոքն յիստակեց: Եւ ինքտ քիչ կերակուր

²⁵ Մ Ե ս ր ր ւ պ Մ ա գ Ի ս տ ր ո ս . Ն շ Վ . ա շ Խ . , է ջ 591: Վ . Թ ր ր գ ո մ յ ա ն . Հ ա յ բ ժ շ կ ա կ ա ն ձ Ե ո ս ա գ Ի ր ք Ե ր ո ս ա ղ Ե մ Ի վ ա ն ք Ի ն . — «Հ ա ն ղ Ե ս ա մ Ի ս ր յ ա » , 1924, № 3—4, է ջ 114—115:

կղզին ծեծես և Լիբես և գինով խմել տաս, զճիճին սպանանի: Եւ թէ զնուան կուտն և զկտեն շորցնես և ծեծես և զլընդացն աւծես, նա պնդէ և ամրացնի: Եւ երբ ի վերայ խոցի ցանել տաս, շորցնէ և յիրար ածէ»:

է. և նոռն ի դեղ մօտ է, քան ի կերակուրն: Թթու նուռն զգողն յորդորէ խասիաթով և զշոռն թէ յաչքն դնես, զարխայն սրբէ: Նըռնահատն կապէ, զոր սաֆրա լուծէ... Ջնոնե-նոյն կեղեն Լիբէ գինով և խմցո, ճիճի հանէ յաղեց: Ջկուտն շորցո և աղա և զլինդքն պընդէ, Լիբ շիբես: Թէ ի վերայ խոցի դնես, ցամբըցնէ և յիրար ածէ»:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց մեկ հետաքրքրական հանգսանք ես. «Գագիկ-Չեթումյան բժշկարանի» Վենետիկի տարբերակում: սույն գլխի վերջում (ձեռ. № 1281, էջ 52ա) կա մի փոքր տեղեկություն մեղրի մասին. «Մեղրն տաք է»: Սակայն № 8382 ժողովածուի առաջին բժշկարանում այդ հատվածը շատ ավելի ընդարձակ է ու մոտ է «ավագ հեքիմարանի» Երուսաղեմի տարբերակին, որը, սակայն, ուշ շրջանի հավելված է նոտրգիր գրություններում:

Ձեռ. № 8382, էջ 52բ-53ա

Ձեռ. № 370, էջ 77բ

«Մեղրն տաք է և չորահին, սրբական է և հալալան, զգիճութին յինքն քարչէ ի ներսի կողմանէն: Եւ այսոր վկա, զի ամենայն անձին առտն, երբ ածես, ի դուրս հանէ: Եւ երբ ի վերայ խոցի ածես, զխոցն սրբէ: Եւ ինքն ախորժական է բլղամին մարդոյ և հովարնութիւն մարդոյ: Եւ սաֆրաիկ մարդոյ զէն է, զի կապէ դիւրն և զգիճութին յինքն ժողովէ: Ապա սլարտ է սաֆրաիկ մարդոյն պատրաստ կենալ ի մեղրէ և ի մեղրաչէ: Եւ ախորժական և Եղէկ մեղրն այն է, որ ուժով լինի և կարմիր: Եւ ի վերայ մեղրն աւգտէ երգունին, թէ ածես»:

«Մեղր տաք է և չոր, սրբական է և հալական, զգիճութին մարդոյ յինքն քարչէ ի ներսի կողմանէն: Այսոր վկա այս է, որ զամէն անձին աղտն, երբ ածես, ցրուրս հանէ: Եւ թէ ի խոցոյ վերայ ածես, զխոցն սրբէ: Եւ թէ ջրով Լիբես, ջերմութիւնն պակասի իւր սրբութիւնէ: Եւ ախորժական է պալղամի մարդոյ և հովարնութիւն: Եւ աղէկ կերակրէ զանձն, բայց սաֆրայոտ մարդոյ զէն է. գնորայ զփորն կապէ այնոք, որ զջերմութիւն ուժովցնէ և զորացնէ զայն զգիճութինն, որ ի ներք ի յաղիքն լինի: Վասն այնոր պիտի պատրաստ կայ ի սաֆրայիկ մարդոյն ի մեղրէ և ի մեղրաչոյէ... Ապա թէ նշա մեղր լինի, պակաս աւաքութիւն լինի, քան զայն: Եւ ախորժական (Ճեղր) կար էիւր լինի, և տաբութիւն ուժով լինի: Ապա այն մեղրն զանութիւն լինի, օշինդրէ լինի: Այսցեղ մեղրն սրբական լինի, լերդին ճանապարհներն բանա, զստամոքսն ուժովցնէ, հերքինի աւգտէ, ի վերայ ածես...»

Պետք է ենթադրել, որ Երուսաղեմի տարբերակի ուշ շրջանի կազմողը, լրացնելով հին բնագրի թերի մասերը, դիմել է մեզ չհասած «Գագիկ-Չեթումյան բժշկարանի» այլ տարբերակին, որից օգտվել է նաև № 8382 ժողովածուի առաջին բժշկարանի կազմողը, կրճատելով բնագիրը և մասնամանր վերջին հատվածը: Նշենք նաև, որ № 8382 ժողովածուի առաջին բժշկարանի «Վասն ամենայն ցեղ խաւարտի» գլուխը (էջ 53ա) Վենետիկի տարբերակի «Վասն խոտերոյ և բանջարոյ» գլխի հետ (ձեռ. № 1281, էջ 52ա) համեմատելով նկատել ենք զգալի տարբերություններ թէ՛ նկարագրված բույսերի և թէ՛ նրանց հերթականությունը մեջ: Մինչդեռ Երուսաղեմի տարբերակի «Վասն ամենայն ցեղ խաւարտաց» գլուխը «հաղար»-ից սկսած մինչև «փերփեր»-ը (ձեռ. № 370, էջ 78ա) համընկնում է № 8382 ժողովածուի առաջին բժշկարանի համապատասխան հատվածի հետ: «Ավագ հեքիմարանի» Երուսաղեմի տարբերակում այս մասը նույնպես ուշ շրջանի հավելված է. կազմողն այս դեպքում էլ լրացրել է

Հին բնագրի թերի մասն այլ տարբերակից, որն ազատ խմբագրությամբ և ավելի համառոտ ձևով առկա է № 8382 ժողովածուի առաջին բժշկարանում:

Դեղագիտության և պրոզնոստիկայի բաժնից բացի առաջին բժշկարանը պարունակում է նաև ախտաբանության ու մահճաբուժության հարցերին նըվիրված մի շարք գլուխներ, որոնցից մի քանիսը՝ «Վասն որոյ թոքն ցաւի» (ԻԱ), «Վասն որ քրտնած ջուր լինի խմել» (ԻԴ), «Վասն կոլընջի» (ԻԶ), «Վասն երիկամացաւի» (ԻԷ), «Վասն մամացի» (ԻԸ), «Վասն նգրիսի, որ է պոզագրա» (ԽԴ), իրենցից ներկայացնում են «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» համապատասխան գլուխների ուղատ խմբագրություն: Հիվանդությունների կլինիկական նկարագրությունից բացի այստեղ առկա են շափաղանց կարևոր տեղեկություններ բուսաբուժման և սննդաբուժման վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում շաքարախտին (դիաբետին) նվիրված հատվածը: Թեպետ միջնադարյան բժշկություն մեջ սբա պատճառները սխալ էին մեկնաբանվում և դիաբետը համարվում էր երիկամի հիվանդություն (մինչդեռ ժամանակակից գիտության տվյալներով այն առաջանում է ենթաստամոքսային գեղձի ախտահարումից), սակայն փորձնական ճանապարհով միջնադարյան հայ բժիշկները մշակել էին նրա դեղային և սննդաբուժման ուղիղ համակարգը, որը մոտ է արդի պահանջներին: Բերենք դիաբետի մասին տրվյալներ № 8382 ժողովածուի առաջին բժշկարանի «Վասն երիկամացաւի» գլխից՝ զուգահեռներ անցկացնելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» Վենետիկի և Նրուսաղեմի տարբերակների համապատասխան հատվածի հետ:

Ձեռ. № 8382, էջ 3բ—9ա Ձեռ. № 1281, էջ 152ա Ձեռ. № 370, էջ 269ա—բ

«Այլ ցաւ մի կայ, այլ (դիա)պիտաւս ասեն. և ինքն ի յերիկամունքն ընծայի: Եւ իր նշանն այս է, որ մարդուն ջերմութիւնն շատանայ, և ջուրն, զոր խմէ, նոյն գունովն ելանէ: Ինչ այս ցաւս դիպի մարդուն, թող շատ ջուր շխմէ, այլ ծարաւ կենայ և ոչ կուշտ կերակուր. և գարեջուր, գարի հաց, խիար ու շինկիարի կաթովն և ջրի տեղ դրդմի ջուր խմելու և կամ խաւածի ըմբելի և կամ ժրոի ըմբելի: Եւ դեղ դայս արայ. առ բզրդատուն ու խիարի ջրով թրջէ և տուր, որ խմէ յանաթեց, աւետէ: Այլ դեղ փորձած. առ կակիայ, շոր կարմիր վարդ, նոան ծաղիկ, սամդ, քիթրայ, զա-

«Ցաւ մի, որ կոչի դիապիտոս. և ինքտ յիրիկամունքն ընծայի: Եւ իր նշանն այս է. ջերմութիւն, ծարաւն շատնայ, և զջուրն գէղ խմէ, նոյն գունովն ելնէ շատ-շատ, և մարդն հալի և բարկնա: Ջայսոցաւ տէրն աղէկ ծարվեցո և կուշտ ջուր և ապուր մի տուր, այլ ուտէ կարմիր կորեկ և գարո կորկոտ և խմելո գարեջուր և ջրի փոխան դդմի ջուր տուր և նոան ջոր և դամոն շրի ջուր և շարապ սերկելի, ժոի և գարի: Եւ գեղ դայս արա. խախա Բ դրամ, շոր կարմիր վարդ, նոան ծաղիկ Գ դրամ, սամխ դրամ Ա, քիթրա կէս դրամ, աղա, մաղէ, պզրդատնի ջրով շաղէ, բլթնի արա, ի շքի

«Այլ ցաւ մի կայ, որ կոչի դիապիտոս. և ինքն յիրիկամունքն ընծայի. և իր նշանն այս է, որ ջերմութիւնն շատանա առ մարդն և ծարաւն շատանա, և ջուրն գերդ խմէ, նոյն գոյնովն ելանէ շատ-շատ, և մարդն հալի և բարկնայ: Եւ երբ այս ցաւս դիպի մարդուն, պարտ է, որ գինք աղէկ ծարաւեցնեն և ոչ կուշտ ջուր տան և ոչ կուշտ ապուր: Այլ տուր ուտելոյ կարմիր կորեկ և գարեկորկոտ և խմելոյ գարեջուր և ջրի փոխան խմելոյ դդմի ջուր տուր և նոան ջուր և դամոյնաշրի ջուր և շարապ տուր սերկելի և ժոի և խաւածոյ: Եւ դեղ գայս տուր, զի կարի աւզուտ է.

մէն աղա և յիրար խառնէ և բզրդատունի ջրով շաղ-վէ և շորցո, և երբ պիտենա, թրջէ, խմելոյ տուր, և ի կերակուրն դալար գինձ ձգեն»:

շորցո և յօրն Բ դրամ աղա և տուր բմբելով և հով ջրով, որ խմէ: Եւ կերակուր կովու կաթն և ի ներս դալար գինձ կոտրէ»:

փորձած: Առ կակիա, որ է աղջոյրենոյն խէժն, Բ դրամ և շոր կարմիր վարդ Գ դրամ, նուան ծաղիկ Դ դրամ և տաճիկ կոեզ Ա դրամ և քիիրա կէս դրամ. և աղա և մաղէ և պղկատունի ջրով շաղաղէ և բլթնի արա և ի շքի շորացոյ և առ այդից, երբ պիտենայ ամեն աուր Բ դրամ, աղա մանդր և տուր բմպելով և հով ջրով, որ խմէ: Եւ ուտելոյ կովի կաթն տուր և ի ներս դալար գինձ կոտրէ»:

№ 8382 ժողովածուի մեջ դիաբետի մասին հատվածը, հավանաբար, ավելի հարազատ է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» այն տարբերակին, որին հաճախ դիմում էր № 370 ձեռագրի ուշ շրջանի կազմողը: Սակայն այս ենթադրությունը դժվար է ապացուցել, քանի որ նրուսաղեմի տարբերակում պահպանվել է վերոհիշյալ հատվածի հին բնագիրը բոլորգիր գրությամբ: Վերջինս իրենից ներկայացնում է Վենետիկի տարբերակի (ձեռ. № 1281) ավելի ընդարձակ ձևը, մինչդեռ № 8382 ժողովածուի առաջին բժշկարանում հանդիպում են ուրիշ դեղաբույսերի անուններ և դեղատոմսեր, որոնք վկայում են այլ տարբերակի առկայության մասին: Ընդհանուր առմամբ № 8382 ժողովածուի առաջին բժշկարանում պահպանվել է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» 15 գլուխ՝ ազատ խմբագրությամբ:

Ինչ վերաբերում է ժողովածուի երկրորդ և երրորդ բժշկարաններին, որոնք հիմնականում նվիրված են խիտաբանության և մահճաբուծության հարցերին, ապա սրանք քիչ են առնչվում «ավաղ հեքիմարանի» հետ: Երկրորդ բժշկարանից միայն երեք գլուխ՝ «Վասն պուհրան ճանաչելոյ», «Վասն կարուրա ճանաչելոյ» և «Վասն խափականի» խորագրով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» համապատասխան գլուխների ազատ խմբագրություն են, ըստ որում առաջին երկուսում արծարծվում են պրոգնոստիկայի հարցեր, իսկ երրորդում տրված է սրտի հիվանդության նկարագրություն: Երրորդ բժշկարանից միայն մեկ գլուխ՝ «Վասն կսթան (երակ) առնելոյ» խորագրով, համապատասխանում է նրուսաղեմի տարբերակի ուշ շրջանի հավելվածին (ձեռ. № 370, էջ 57բ): Պետք է նշել նաև, որ երրորդ բժշկարանից 22 գլուխ (34-րդից մինչև 56-րդը) XVII դարի վերջում մի անանուն հեղինակ ներմուծել է իր բժշկարանը (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 10203): Վերջինս թերի է սկզբից, բնագրից 60 թերթ ընկած են և այն սկսվում է 119-րդ չլիքից, ուստի նրա շատ կարևոր մասեր, որտեղ, հավանաբար, գետեղված էին նյութեր № 8382 ժողովածուի առաջին և երկրորդ բժշկարաններից, ցավոք, մեզ չեն հասել: Իբրև ապացույց բերենք հետևյալ օրինակը.

Վասն մարդոյ, որ գանկտի, քէ գագարս կու ցաւի և կու կրակծի
Ձեռ. № 8382, գլուխ 1b (35), էջ 125ա

Վասն մարդոյ, որ գանգտի, քէ գագարս կու ցաւի և կու կակծի
Ձեռ. № 10203, գլուխ ՃԺԹ (119), էջ 1ա

«Եւ ի քիթս ի դուրս զերդ հուր կու թափի և շորութին բերէ ի քմացս, և ընդ աչքս արտատուք կու թափի և քորի: Այն վուշ ու խամր ռնի ի շլինքն և յղեղն սպիտակ մաղաս ունի: «Եւ ի քիթս ի դուրս զերդ հուր կու ելանէ և շորութին բերէ ի քմացս, և ընդ աչքս արտատուք կու թափի և քորի: Այն վուշ ու խամր ռնի ի շլինքն և յղեղն սպիտակ մաղաս ունի:

Առ հրեղի զարանֆու Ա դրամ և վարդեչուր
և (40) դրամ, աղայ և ի ներս խառնէ և առ
ւաֆրան և (5) գարեհատ, աղա և ի ներս լից:
Ապայ առ կուրայ շաքար Ժ (10) դրամ, եռ-
ցոյ դամէնտ և տաք-տաք տուր յանաթեց, որ
ղեղին հոտն ի քիմքն առնու: Կտրէ ի թրթվէ
և ի գինոյ, կերակուր սև ծոր տուր աղանա-
ծագով»:

Առ հրեղի զարանֆու Ա (1) տրամ և վարդեչուր
և (40) տրամ, աղա և ի ներս խառնէ և առ
ղաֆրան և (5) գարեհատ, աղա և ի ներս լից:
Ապա առ կուրայ շաքար Ծ (50) տրամ, սիս-
ոան ջրով եոցու վամէնտ և տուր տաք-տաք
յանաթեց, որ դեղին հոտն ի քիմքն առնու:
Կտրէ ի թրթվէ, ի գինոյ, կերակուր սիսոան
չուր տուր աղանոյ ձագով ԺԵ (15) օր»:

Բերված փաստերը վկայում են № 8382 ժողովածուի, իբրև «ավագ հեքի-
մարանի» ժառանգորդի, բարձր հեղինակության մասին միջնադարյան հայ
բժշկության մեջ: Այսպիսի ներմուծումներ (ավելի կամ պակաս ծավալով)
հանդիպում են Մաշտոցի անվան Մատենադարանի և այլ բժշկարաններում:
«Գազիկ-Հեթումյան բժշկարանի» հետ ավելի շատ առնչություններ ունի
№ 8382 ժողովածուի շորրորդ բժշկարանը, որը պարունակում է 115 գլուխ՝
նվիրված դեղագիտության հարցերին: Բնագրագիտական համեմատություն-
ների շնորհիվ պարզվեց, որ շորրորդ բժշկարանի 1-ից 37-րդ գլուխները հա-
մապատասխանում են «Գազիկ-Հեթումյան բժշկարանի» ԺԳ գլխին («Վասն
ղեղերոյ զօրութեանց»), ըստ որում արտեղ տրվում է դանազան բույսերի
նկարագրություն, սկսած սապոհից (aloe), և ամեն մի դեղաբույսի նվիրված է
առանձին գլուխ: Բերենք օրինակ.

Վասն սասլոին
Ձև. № 8382, գլ. Ա, էջ 146ա-բ

Վասն դեղերոյ զօրութեանց
Ձև. № 1281, գլ. ԺԳ, էջ 36ա

«Յառաջ զսապոն լիշենք, թէ ինչ բնութիւն է.
Սապոն ալտէ գլխոյ և աչաց և ստամոքսի և
զլերդին ճանապարհն բանայ, կոլինջի ալտէ և
ղայրած մաղձն հանէ: Եւ երբ շոր աղաս ու ի
վերա միզուկին ցանես, ալտէ: Լաւին նշանն
այս է, որ կարմիր լերդագուն լինի ու շուտ
կոտրի, մէջն դեղին, անուշահոտ, խիստ դառն:
Ի յիր շաքսն տալուն ի կէս դրամէն մինչև յԲ
(2) դրամն ըստ ուժուն, ըստ արագն: Ի տալն
մաղտաթէ խառնէ, որչափ որ աղաս, ի ստա-
մոքսն չի կառչի. լաւն այն է: Ու թէ սնգան
էրկեղ լինի, քարայխունկ խառնէ»:

«Առաջին զսապոնն օգտութիւն և զկազմելիք:
Օգտէ գլխո, աչից, ստամոքի, բանա զլերդի
ճանապարհն, օգտէ կոլնջի, ծրբէ զայրած
մաղձն, հանէ: Չոր ու աղացած զգանն ողջցնէ:
Եւ յիրմէ կարմրոցուն լաւ է ու փշրտուկն, որ
դեղին մէջ լինի և անուշահոտ և լինի խիստ
լեղի: Եւ տալն ի կէս դրամէն ինչու ի յԲ (2)
դրամ ըստ ուժուն: Եւ իր կազմելիքն, որ ընդ ինք
մաղտաթէ խառնես ու խիստ մանր աղաս: Եւ
թէ սնգնոտի սաս, ի հետ քարախունկ խառնէ»:

Շորրորդ բժշկարանի մի քանի գլուխ՝ «Վասն յիմանալոյ զաղէկն և զվատն
չրերն» (հԵ), «Վասն ամենայն ցեղ գինոյ» (հԶ), «Վասն ամենայն ցեղ կա-
թի» (հԷ), «Վասն ամենայն ցեղ անուշահոտացն» (հԸ) համապատասխանում
են «ավագ հեքիմարանի» այն գլուխներին, որոնք սերտորեն կապված են
Դիոսկորիդեսի «Materia medica»-ի, այսինքն՝ բժշկարանի հնագույն շերտի
հետ:

Այսպիսով, № 8382 ժողովածուի շորս բժշկարաններում պահպանվել է
«Գազիկ-Հեթումյան բժշկարանի» 25 գլուխ ազատ խմբագրությամբ, որոնք,
մեր տվյալների համաձայն, չեն կրկնում Վենետիկի և Երուսաղեմի տարբե-
րակները, այլ ծագում են մեկ այլ խմբագրական տարբերակից, որը լայն
շրջանառություն է ունեցել միջնադարյան հայ բժշկության ոլորտում և որից
օգտվել են նաև այլ բժշկարանների հեղինակներ, այդ թվում՝ Երուսաղեմի
տարբերակի ուշ շրջանի կազմողը: Այս տարբերակի հետքերը պիտի որոնել

միջնադարյան հայ բժշկության այլ հուշարձաններում, որոնք մենք շարունակում ենք ուսումնասիրել, հույս ունենալով երբեք վերականգնել «ավագ հիբիմարանի» այս ամբողջական լիակատար բնագիրը և դրանով լուծել քննական բնագրի հրատարակության և ուսումնասիրության կարևոր հարցը:

«ЛЕЧЕБНИК ГАГИКА—ХЕТУМА» И ЕГО РЕДАКЦИИ

С. А. ВАРДАНЯН

Резюме

Среди сочинений медико-биологического характера, созданных в эпоху расцвета армянской книжности в Анийском царстве Багратидов, выделяется труд по лекарствоведению, написанный при царе Гагике I (990—1020), который в XII—XIII вв. был отредактирован в Киликийской Армении и получил название «Лечебника Гагика—Хетума». Редактор включил в него, помимо анийского лекарственника, произведения киликийской врачебной школы: 30 глав книги Мхитара Гераши (XII в.) «Утешение при лихорадках» и лечебник анонимного автора. В настоящее время науке известны два списка «Лечебника Гагика—Хетума»: рукопись № 370 монастыря якобитов в Иерусалиме, написанная на бумаге, и пергаменный манускрипт № 1281 книгохранилища конгрегации венецианских Мхитаристов.

В статье проведено исследование структуры и содержания «Лечебника Гагика—Хетума», его частей, принадлежащих различным врачебным школам средневековой Армении (анийской и киликийской). На основании текстологического анализа списков лечебника и сопоставления с рук. № 6869 Матенадарапа им. Маштоца выяснены и уточнены источники книги. Сравнение медицинских сочинений Матенадарапа с текстом иерусалимского и венецианского списков «Лечебника Гагика—Хетума», фотокопиями которых мы располагали, позволило обнаружить 25 его глав в вольной редакции в сборнике № 8382. В статье впервые дано подробное археографическое описание этого интересного медицинского сборника начала XIV в.